

ՊՐՈ-ՕՐԻԵՆՏԵ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ՝ ԿԱՐԴԻՆԱԼ ՖՐԱՆՑ ՔՅՈՆԻԳԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

1982 թվականի հոկտեմբերի 29-ին, ուրբաթ օրը, առավոտյան, Պրո-Օրիենտե կազմակերպության պատվիրակությունը, նախօրոք եղած կարգադրությանց համաձայն, պաշտոնական այցով եղել է Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքում: Պատվիրակության անդամները այցելել են Ս. Հակոբի Մայր տաճարը և «Եդուարդ ու Հելեն Մարտիկյան թանգարանը»: Այնուհետև նրանց ցույց են տրվել տաճարի գանձատանը ի պահ դրված հայ եկեղեցական արվեստի մի շարք արժեքավոր նմուշներ:

Երուսաղեմի հայոց Ամենապատիվ Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքը և Վիեննայի Արքեպիսկոպոս կարդինալ Ֆրանց Քյոնիգը՝ շրջապատված հայ բարձրաստիճան հոգևորականներով

Նույն օրը, երեկոյան, պատրիարքարանի դահլիճում, ի պատիվ Վիեննայի Արքեպիսկոպոս կարդինալ Ֆրանց Քյոնիգի և Պրո-Օրիենտե կավմակերպության պատվիրակության, Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոսը տվել է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա են եղել Երուսաղեմում Ավստրիայի հյուպատոսության կավմը, օտար եկեղեցական հարանվանությունների, ինչպես նաև Երուսաղեմի հայկական կավմակերպությունների ներկայացուցիչներ:

Կարդինալ Ֆրանց Քյոնիգը, իր անակնկալ հիվանդության պատճառով, չի կարողացել ներկա գտնվել սույն այցելությանց: Սակայն նոյեմբերի 2-ին, երկուշաբթի օրը, առավոտյան, եկել է հայոց պատրիարքարան իր հարգանքը և շնորհակալությունը հայտնելու Ամենապատիվ Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքին՝ պատվիրակության անդամներին ցույց տրված սիրալիր ընդունելության համար: Այդ առթիվ Սրբազան Պատրիարքը կարդինալ Ֆրանց Քյոնիգին պատվել է Ս. Հակոբի ոսկյա խաչով, իսկ կարդինալը Նորին Ամենապատվությանը նվիրել է մի սկիհ ի նշան քրիստոնեական եղբայրական սիրո: